

# «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Սեյսմիկ պաշտպանության մասին» Հայաստանի  
Հանրապետության 2002 թվականի հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի (այսուհետ՝  
Օրենք) 13-րդ հոդվածի՝

1) վերնագրում «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման  
հանրապետական գործադիր» բառերը փոխարինել «պետական կառավարման  
համակարգի» բառերով,

2) 1-ին մասում «Հայաստանի Հանրապետության հանրապետական  
գործադիր» բառերը փոխարինել «պետական կառավարման համակարգի»  
բառերով,

3) 1-ին մասից հանել «և իրավական ակտերով» բառերը:

**Հոդված 2.** Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետում և 15-րդ հոդվածի  
2-րդ մասի 6-րդ կետում «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ»  
բառերը փոխարինել «օրենքով» բառով:

**Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման  
օրվան հաջորդող տասներորդ օրը:

